

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶԿԻ ՄԻ ԶԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ. Ն. ՎԱՐՂԱՆՅԱՆ

Լեզվաբանության մեջ տարբերակվում են գրավոր և բանավոր ոճերը՝ որպես խոսքի դրսևորման տարբեր եղանակներ:

Որպես կանոն՝ բանավոր խոսքն ունի երկու տարբերակ՝ գրական-խոսակցական և ժողովրդախոսակցական: Առաջին տեսակը գրքային, գրավոր լեզվին մոտ կանգնած խոսքային որակ է: Այն հիմնականում գործածվում է մտավորականության կողմից և առավել մշակված, կանոնակարգված համակարգ է, քան ժողովրդախոսակցականը: Գրական-խոսակցական լեզուն գործածվում է (ամեն մեկն իր իմացածի և կարողությունների չափով) ելույթների, պաշտոնական հանդիպումների, դասավանդման ժամանակ, նաև առօրյա կյանքում: Չի կարելի ասել, որ այն լիովին հանպատրաստից խոսք է, քանի որ լինելով բանավոր՝ շատ դեպքերում նախօրոք մշակվում, համակարգվում է, որպեսզի խոսքն ամբողջական, գեղեցիկ և գրագետ հնչի:

Այլ նկարագիր ունի ժողովրդախոսակցական լեզուն (այսուհետև՝ խոսակցական լեզու): Այն գրական լեզվի խոսակցական տարբերակն է. բանավոր հաղորդակցման ժամանակ օգտագործվող անկաշկանդ խոսքը լեզվական որոշակի համակարգ է, որը տարբերվում է պաշտոնական, գրքային խոսքից իր անմիջականությամբ և ոչ պաշտոնական բնույթով:

Առաջին հերթին պետք է նշել խոսակցական լեզվի հակիրճությունը: Քանի որ այն հիմնականում արտահայտվում է երկխոսությունների ձևով, ապա որոշակի միտք փոխանակելու համար հաճախ մեկ արտահայտությունը կամ բառը բավական է: Ինչպես նշում է Ս. Մեյրոնյանը. «Այն (բանավոր խոսքը - Գ. Վ.) իրավիճակի լեզու է, կենդանի հաղորդակցման միջոց, որ դրսևորվում է հիմնականում երկխոսությունների, կենդանի գրույցի ձևով»:

Խոսակցական լեզուն ունի ընդգծված հուզաարտահայտչական երանգ, որով խոսողն ուզում է ազդել խոսակցի վրա: Այդ պատճառով բանավոր խոսքում շատ են գործածվում ձայնարկությունները, հարցական դերանունները, հրամայական եղանակի բայերը: Իհարկե, գրավոր խոսքում ևս կան խոսքի մասեր, որոնք արտահայտում են խոսողի իմացական (վերաբերականներ) և զգացական (ձայնարկություններ) վերաբերմունքը տվյալ երևույթի նկատմամբ:

Սակայն բանավոր խոսքում այդ երանգն ավելի ցայտուն է, հուզական, քանի որ համապատասխան բառերին և արտահայտություններին միանում է խոսողի համապատասխան հնչերանգը, որը բազմապատկում է խոսքի հուզականությունը:

Խոսակցական լեզուն, ի տարբերություն գրավորի, նորմավորված և միօրինակ չէ: Դա զգացվում է և՛ բառակազմության, և՛ քերականական առանձնահատկությունների, և՛ հնչյունական համակարգի մեջ: Այն աչքի է ընկնում իր հարուստ, բազմապիսի բառապաշարով, որն ընդգծում է նրա անմիջականությունն ու հուզականությունը: Հաճախ կարելի է հանդիպել բառերի բարբառային տարբերակների, ցանկալի և ոչ ցանկալի օտարաբանությունների, դիպվածային (օկագիոնալ) բառերի, դարձվածքների և այլն: Այն մշտապես փոփոխվող և ճկուն համակարգ է՝ պատրաստ արձագանքելու հասարակության զարգացման գործընթացին:

¹ Ս. Մեյրոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 219:

ինչպես բացատրում է Մ. Աբեղյանը. «Քանի որ գրական լեզուն (Ռեդիմակն այստեղ նկատի ունի գրական լեզվի բանավոր տարբերակը՝ խոսքը - Գ. Վ.) կենդանի խոսակցական լեզու է, անխոսակցելի կերպով պիտի ենթակա լինի այն անգիտակցական փոփոխություններին, որ բնականորեն առաջ են գալիս խոսելու գործունեությունից: Ամեն անհատ, խոսելով և գրելով այդ լեզվով, ինչքան էլ դպրոցում և թիմ մատենագործություններից սովորած լինի «ուղիղ» խոսելու և գրելու կանոնները, ունի դարձյալ որոշ չափի ազատություն իր ձևով վերաստեղծելու լեզուն և իր կողմից ազդելու ուրիշ խոսողների և գրողների վրա»²:

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ խոսակցական ոճն ունի իր հնչյունական, բառապաշարային-բառակազմական, քերականական յուրահատուկ համակարգը, որով և տարբերվում է գրավոր խոսքից:

Անդրադառնալով բառագիտությանը՝ պետք է նշել, որ հայերենի ողջ բառային կազմը խոսքում հավասարապես չի կիրառվում: Կան բառերի գործուն և ոչ գործուն տեսակներ, որոնք իրենց կիրառության որոշակի ոլորտներն ունեն: Որոշ բառեր լեզվում ավելի շատ են գործածվում, իսկ մի մասի կիրառությունը խիստ սահմանափակ է:

Բառապաշարի մի մեծ հատված չի պատկանում որոշակի ոճական խմբի, այլ հավասարապես գործածվում է և՛ խոսակցական, և՛ գրական լեզուներում: Բառերի այդ խումբը կարող է կիրառվել հատուկ բառապաշարի ցանկացած գործառական ոճում, այսինքն՝ գործածության սահմանափակում չունենալ: Դրանք չեն պատկանում բառային որևէ շերտի, այդ իսկ պատճառով կոչվում են չեզոք բառեր: Չեզոք բառապաշարը լեզվի ատաղձն է, այն խումբը, որը մշտապես կիրառվում է հասարակության բոլոր շերտերի կողմից հավասարապես (այստեղ նկատի չունենք բարբառախոս և ժարգոնախոս շերտերը): Օրինակ՝ աթոռ, սեղան, տուն, արտ, դուռ, բաժակ, սենյակ, շուր, հաց, աղ, քայլել, նայել, տեսնել, ուտել, քնել և այլն: Այս բառախումբը մշտապես գործածվող և լեզվի հիմնական, անփոխարինելի մասն է: Սրանցից շատերը, ունենալով որոշակի կիրառություն, կարող են դառնալ այլ բառաշերտի մաս՝ ձեռք բերելով նոր, այդ ոլորտին համապատասխան իմաստ: Այսպես՝ լեզու բառը, որը չեզոք շերտի բառ է, համապատասխան կիրառության դեպքում դառնում է տերմին լեզվաբանության և բժշկության մեջ: Կամ սեղան բառը տերմին է դառնում երկրաչափության մեջ:

Բարբառայնություններ: Խոսակցական լեզվի մյուս կարևոր շերտը բարբառային բառերն են: Այստեղ չպետք է շփոթել բարբառներն ու բարբառայնությունները: Բարբառները որոշակի տարածքում, որոշակի մարդկանց խմբի կողմից կիրառվող հիմնական լեզվական միջոց են: Ինչպես գիտենք, հայերենն ունի վաթսուհինգ ավելի բարբառներ՝ իրենց հնչյունական, բառային, քերականական յուրահատուկ համակարգերով, ինչով և տարբերվում են միմյանցից: Այլ նկարագիր ունեն բարբառայնությունները: Դրանք բարբառներից խոսակցական լեզվին անցած բառեր են, որոնք որոշ դեպքերում հարստացնում և գեղեցկացնում են բանավոր խոսքը, իսկ այլ դեպքերում դարձնում են պարզունակ և ոչ տպավորիչ: Բարբառայնությունները ունեն իրենց գրական համարժեք բառերը, սակայն ժողովրդի կողմից ավելի կիրառելի են առաջին տարբերակները: Այսպես՝ ախպեր ձևը լայնորեն կիրառվում է խոսակցական լեզվում, և նրա գրական՝ եղբայր համարժեքը, կարելի է ասել, համարյա չի գործածվում խոսակցական լեզվում, կամ՝ աշխարհ, խակ, խելա և շատ այլ բառեր լայնորեն տարածված են հասարակության ամենատարբեր շերտերում: Բանավոր խոսքում հաճախ հանդիպում են նաև դարձվածքներ, դարձվածքային հարադրավոր բայեր, որոնք առաջացել են բարբառներում, սակայն այսօր իրենց տեղն ունեն խոսակցական լեզվում, ինչպես՝ հալումաշ անել, ձեռ առնել, հախից գալ, ձեռոտո ընկնել և այլն:

Մեծ է նաև օտար լեզուներից՝ պարսկերենից, թուրքերենից և արաբերենից, բարբառների միջոցով խոսակցական լեզու ներթափանցած բառերի կիրառությունը, օրինակ՝

² Մ. Աբեղյան, Երկեր, Բ. Զ, Եր., 1974, էջ 51:

թոզ, փալաս, յորդան, դոշակ, շիգայր, շելյուան, դուման, խալի և այլն: Պետք է նշել, որ վերոհիշյալ լեզուներից միայն թուրքերենից է, որ գրական լեզուն համարյա բառեր չի վերցրել՝ ունենալով դրանց համարժեք տարբերակները, իսկ փոխառությունները մնացել են միայն խոսակցական լեզվում¹:

Ժարգոնային բառեր: խոսակցական լեզվի հաջորդ շերտը ժարգոնային բառերն են: Այստեղ նկատի չունենք հասարակության նեղ խմբերի այն բառապաշարը, որ հորինվել և գործածվում է միայն այդ խմբերում և հիմնականում անհասկանալի է հասարակության մյուս շերտերին: Այդ բառախմբերը ժամանակի ընթացքում հնանում են և փոխարինվում նորերով, սակայն, ինչպես և բարբառների դեպքում, այս բառերից որոշները ներթափանցել են խոսակցական լեզու, արմատացել և դարձել լայնորեն կիրառվող բառեր: Սրանց մի մասը օտար լեզուներից վերցված բառեր են, որոնց ամբողջական կամ կրճատ տարբերակը կիրառվում է խոսքում: Այսպես՝ պրիվ (привет - ողջույն բառի կրճատ ձևը), շպո (шапка - ծածկագիր բառի կրճատ ձևը), վորշեմ, զուբրիտ, զուբրյոշկա և այլ բառեր արմատացել են խոսակցական լեզվում: Այսօր նաև անգլերենից են շատ բառեր անցնում խոսակցական լեզվին, ինչպես՝ օքեյ, բայ-բայ և այլն:

Գարոցականների բանավոր խոսքում լայնորեն կիրառվում են բառերի կրճատումով ստացվող ժարգոնային տարբերակները: Օրինակ՝ մաթեմատիկա - մաթեմ, հանրահաշիվ - հանր, անգլերեն - անգլ և այլն:

Ինչպես տեսնում ենք, ժարգոնային բառերն ավելի տարածված են պատանհանների և երիտասարդների շրջանում, որոնք, ըստ կիրառողների, ավելի դիպուկ և նպատակաուղղված են դարձնում խոսքը: Այսպես՝ անկապ (անտեղի, անցանկալի), անջո (անջատված բառի կարճ տարբերակը, որ նշանակում է դանդաղաշարժ, անհասկացող) բառերը կարծես ավելի են ընդգծում դրանց բացասական նշանակությունը, միևնույն ժամանակ դիպուկություն և հունորային երանգ հաղորդում խոսքին:

Օտարաբանություններ: Օտար բառերի առկայությունը լեզվում պատմական որոշակի պատճառաբանվածություն և հիմնավորում ունի: Հայ ժողովուրդը դարեր շարունակ գտնվել է օտարի լծի տակ կամ անընդհատ շփվել օտարալեզու հարևան ժողովուրդների հետ, և պատմական այդ երկարատև գործընթացում հայոց լեզուն մեծ ազդեցություն է կրել ամենատարբեր լեզուներից: Գաղտնիք չէ, որ հայերենը մեծ թվով փոխառյալ բառեր ունի պարսկերենից, արաբերենից, լատիներենից (այս լեզուներից փոխառված բառերը հիմնականում անցել են գրական լեզվին), թուրքերենից: Ավելի վաղ ժամանակներում հայերենին անցած բառերը ինչ-որ չափով կորցրել են իրենց նախկին լեզվական պատկանելությունը և համարվում են հայերեն բառեր: Օրինակ՝ մազ, բաշ, մատիտ, երշիկ, էլակ, հեր, երակ, նախարար, արև, սահման, աշխարհ և այլն:

Սակայն այսօր նկատելի է մի բացասական երևույթ. երբ ունենալով տվյալ բառի հայերեն տարբերակը՝ դրա փոխարեն օգտագործվում է օտար լեզվից վերցված բառը (հիմնականում ռուսերենից, այժմ նաև՝ անգլերենից): Այս երևույթը տարածված է կենցաղային բառերի կիրառության մեջ: Օրինակ՝ վեդրո - դուլլ, խալադիմիկ - սառնարան, խոլոդ - սառցարան, կոանթ - ծորակ, դուշ - ցնցուղ, զանափեսկա - վարագույր, մեբել - կահույք և այլն: Կենցաղային բառապաշարում այս երևույթի տարածված լինելը պայմանավորված է մի կարևոր հանգամանքով. այդ բառերից շատերի հայերեն տարբերակները ստեղծվել են համեմատաբար վերջերս (վերջին 20-30 տարիների ընթացքում), և որոշակի ժամանակ է պետք, որպեսզի մարդիկ յուրացնեն դրանք: Այսպես՝ շտեպցել - վարդակ, պարկետ - մանրահատակ, պլենդուզ - շրիշակ, ատվյորտկա - պտուտակահան, պլասկագուբցի - հարթաշուրթ, ունիտազ - կոնքաթաս և շատ այլ բառերի հայերեն տարբերակները խոսակցական լեզվում կիրառելու համար դեռ ժամանակ է հարկավոր: Ինչպես երևում է օրինակներից, այս բառերից շատերն ստեղծվել են բառապատճենման ճանապարհով (օր.՝ հարթ+ա+ շուրթ = плоск+о+губцы):

¹ Տե՛ս նույն տեղը, էջ 50-55, նաև՝ Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1993, էջ 70-76:

Ինչպես նշեցինք, այսօր խոսակցական լեզվում կիրառվում են նաև անգլերենից անցած շատ բառեր, և այս երևույթը աստիճանաբար խորանում է: Օրինակ՝ օքեյ - շատ լավ, բայ-բայ - ցտեսություն, օֆիս - գրասենյակ, շեյպինգ - մարզանք, կոմպյուտեր - համակարգիչ և այլն: Կամ համակարգչի՝ սրընթացորեն մեր կյանք մտնելը իր հետ բերեց նաև մի շարք բառեր և արտահայտություններ, ինչպես՝ դիլիթ անել - ջնջել, ոչնչացնել, քանսել անել - հետաձգել, ընդհատել, պրոցեսոր - հիշողության սարք, պրովայդեր - մատակարար և այլն:

Սակայն պետք է նշել, որ իրադրության պաշտոնականության ամամը զուգընթաց օտարաբանությունների օգտագործման հաճախականությունը նվազում է, և խոսքն առավել մաքուր և գեղեցիկ է դառնում:

Հասարակաբանություններ և գոեհկաբանություններ: Խոսակցական լեզվին հատուկ է նաև հասարակաբանական - խոսակցական բառաշերտը: Խոսքը հուզաարտահայտչական երանգ ունեցող այն ցածր ոճի բառերի մասին է, որոնք ընդգծված բացասական, նաև ծաղրական իմաստ են արտահայտում և խոսակցին կշտամբելու կամ տվյալ երևույթը քննադատելու միտում ունեն: Սրանց մեջ կարելի է հանդիպել օտար լեզուներից անցած բառերի, ինչպես՝ ջհանդամ գյողը, ջհանդամ դարասի, զահրյումար, զահլա և այլն:

Հասարակաբանությունների շարքում մի առանձին, խիստ բացասական երանգ ունեն այն անարգական, ծաղրական և անհարկի բառերը, որոնց կիրառությունը միայն վիրավորելու և անարգելու նպատակ է հետապնդում. այս բառաշերտը գոեհկաբանություններն են, գրական լեզվի սահմաններից դուրս գտնվող հասարակաբանությունները, որոնք չեն համապատասխանում գրական նորմին, և որոնց գործածությունը խոսքում խիստ մերժելի է: Օրինակ՝ լակել - խմել, հարբել, զխտկվել - ուտել, զվոնել - թափանել, զբոսնել, անտերուդուս - մենակ, ինքնուրույն, շմթոնել - քնել, ոնխ - բերան և այլն: Հասարակաբանություններ և գոեհկաբանություններ առաջանում են տարբեր ճանապարհներով.

ա. Կենդանիների անվանումները փոխաբերաբար գործածելով. օրինակ՝ անասուն, օձ, ոչիլ, շան լակոտ, տավար, սմբակավոր և այլն:

բ. Առարկաների անվանումները փոխաբերաբար գործածելով. օրինակ՝ փալաս, տախտակ, փչացած ուղիտ և այլն:

գ. Հեքիաթների, ավանդությունների հերոսների անուններով. օրինակ՝ ջադու պանավ, կախարդ, Փանոս, Նազար, Վերգո և այլն (վերջին օրինակներում հասարակաբանությունները հումորային բնույթ են կրում և անձին վիրավորելու միտում չունեն):

Ծավոք, այս երևույթը տարածված է խոսակցական լեզվում և լրջորեն ազդում է լեզվի որակի վրա՝ դժվարացնելով լեզվի մաքրության ուղղությամբ կատարվող աշխատանքները:

Դիպվածային (օկազիոնալ) բառեր: Ինչպես վերևում նշեցինք, խոսակցական լեզվի ամենաբնորոշ հատկանիշներից մեկը հանապարաստից լինելն է: Այդ է պատճառը, որ խոսելու պահին շատ անգամ խոսողի կողմից ստեղծվում են նոր բառեր, որոնք կարող են, ըստ խոսող-հեղինակի, առավել դիպուկ արտահայտել միտքը: Դրանք ընդունված է անվանել դիպվածային բառեր: Սրանք անհատական բնույթ են կրում, կարող են հորինվել խոսելու պահին և մոռացվել: Սակայն որոշ դեպքերում դրանք ավելի երկար կյանք կարող են ունենալ, եթե հաջողված նորաբանություններ են: Այս առումով հետաքրքիր են որոշ ածանցներով կազմված մնամատիպ բառերը՝ օրինակ՝ տարածված են *-չի*, *-չո*, *-իք*, *-ություն* ածանցներով կազմված դիպվածային բառերը՝ խայտառակչի, Արմենչո, բացելիք, խառնելիք, ծեծելիք (երբ խոսողը չգիտի կամ պահի տակ մոռանում է տվյալ գործիքի անվանումը), համոյություն (ինչ-որ մեկի բնավորության գիծը նկատի ունենալով)՝ կշտամբում են խոսակցին: Օրինակ՝ Գլխի համոյություն չանես) և այլն: Բացի ածանցումից՝ այդպիսի բառեր կարող են առաջանալ բառաբարդման ճանապարհով, ինչպես՝ սովորելացապ, տոկոսացապ, սրճամոլ, կյանքակեր, փողխեղդ, հարցախեղդ և այլն: Որոշ դեպքերում խոսակցական լեզվում տեղ են գտնում բառեր, որոնց առաջացումը և կազմությունը անորոշ են, ինչպես՝ գոնդոռա - մեծ, անճոռնի, փմփոշտկած - ոտած, փքված և այլն: Իհարկե,

ման բառերը երկար կյանք ունենալ չեն կարող և ինչպես հապճեպորեն ստեղծվում են, այնպես էլ արագորեն կարող են մոռացվել:

Հնաբանություններ: Խոսակցական լեզուն արագորեն փոփոխվող համակարգ է, միևնույն ժամանակ սովորույթով շատ բան է պահպանում հնից: Այդ է պատճառը, որ որոշ թվով հնաբանություններ դեռևս պահպանվում են խոսակցական լեզվում: Օրինակ՝ վարժապետ, կույակ, բատրակ, բուրժուս և այլն: Որոշ վերապահությամբ հնաբանություններ կարելի է համարել մահ հայերեն բառերի հետ մրցակցության ընթացքում գործածությունից դուրս եկած օտարաբանությունները, ինչպես օրինակ՝ թեորիա, սեսիա, ռեսպուբլիկա, ֆորմուլա, պրինցիպ և այլն:

Նորաբանություններ: Լեզվի բառապաշարը քարացած չէ. այն շարունակ համալրվում է նորանոր բառերով և արտահայտություններով: Լեզուն ունի նոր բառերով հարստանալու երկու ճանապարհ. սեփական միջոցներով նոր բառերի ստեղծում և օտար բառերի փոխառություն: Փոխառյալ բառը և նոր ստեղծվածը մրցակցում են այնքան ժամանակ, քանի դեռ որևէ մեկը չի հաղթանակել: Այս գործընթացի սկզբում փոխառյալ բառերը գիտակցվում են որպես սովորական, հանրալեզվաբանորեն չեզոք, իսկ վերջին շրջանում (եթե ստեղծված բառը ի վերջո հաղթում է) դառնում են օտարաբանություններ: Նորաբանությունները, որպես կանոն, դժվարությամբ են մուտք գործում խոսակցական լեզու, և մեծ տարբերություն է առաջանում բանավոր և գրավոր լեզուների միջև:

Համեմատենք բառերի այս երկու շարքը.

- | | |
|-----------------------|----------------------------|
| պրոցես - գործընթաց | ռադիո - ձայնասփյուռ |
| ֆունկցիա - գործառույթ | ավտոմատ - ինքնաձիգ |
| կոմպլեքս - բարդույթ | տանկ - հրասայլ |
| կենցաղուր - ազնվագ | կոնսերվատորիա - երաժշտամոց |
| դեֆեկտ - արատ | |
| պրինցիպ - սկզբունք | |

Առաջին շարքի բառերի երկրորդ՝ թարգմանված տարբերակները արդեն մտել են գրական լեզու և լայնորեն կիրառվում են գրավոր լեզվում: Երկրորդ շարքի բառերի հայերեն տարբերակները գրավոր խոսքում լայնորեն չեն կիրառվում, և փոխառությունները սովյալ դեպքում հայոց լեզվին ավելի հարիր են: Խոսակցական լեզուն նախապատվությունը տալիս է փոխառություններին, իսկ թարգմանված տարբերակներից շատ քիչ բառեր են կիրառություն գտնում բանավոր խոսքում (գովազդ, արատ, սկզբունք):

Արևմտահայերեն բառեր: Այսօր արևելահայերենի կողքին լսելի են արևմտահայերեն շատ բառեր ու արտահայտություններ, որոնց կիրառությունը պայմանավորված է Հայաստանում շատ թվով սփյուռքահայերի առկայությամբ, ինչպես մահ Հայաստանի և Սփյուռքի համագործակցության ընդլայնմամբ:

Արևմտահայերեն շատ բառեր գրական լեզվին են անցել ժողովրդական լեզվից, և դրանցից մի քանիսը կիրառվում է արևելահայերեն գրական, ինչպես մահ խոսակցական լեզուներում, ինչպես՝ ճանկոտել, պոտիկ, պոթկալ, սքեյլ և այլն:

Ինչպես գիտենք, արևելահայերենի և արևմտահայերենի հիմնական բառապաշարը մույցն է, սակայն կան բառեր, որոնք գործածվում են միայն արևմտահայերենում: Հենց այս բառերի որոշ մասի՝ արևելահայերեն ներթափանցելու միտում է նկատվում: Բերենք մի քանի օրինակ.

- | | |
|--------------------|---------------------|
| կադանդ - նոր տարի | ճերմակ - սպիտակ |
| կանուխ - վաղ, շուտ | ստեպոլին - գազար |
| կոուփ - բռունցք | պաղ - ցուրտ |
| հավկիթ - ձու | հասկնալ - հասկանալ |
| հեռաձայն - հեռախոս | զևզել - դատարկախոս |
| ճատրակ - շախմատ | տաբատ - անդրավարտիք |

Ինչպես երևում է օրինակներից, դրանց մեծ մասն անցել է գրական լեզվին, խոսակցական լեզվում այդ բառերը հիմնականում չեն կիրառվում, բացառությամբ մի քանի դեպքերի, ինչպես օրինակ՝ հավկիթ, պզտիկ, հասկնալ և այլն:

Ավելորդաբանություններ: Թեպետ խոսակցական լեզուն ձգտում է հակիրճության և սեղմության, սակայն շատ դեպքերում նկատվում է հակառակ երևույթը, երբ խոսքի ընթացքում ավելացվում են բառեր և արտահայտություններ, որոնք ծանրաբեռնում և երկարաշունչ են դարձնում այն: Այսպես՝ *ներքև* իջեցնել, *հետ* վերադառնալ, *նորից* վերապատմել, *վեր* բարձրանալ բառերում և արտահայտություններում միևնույն միտքը կրկնվել է բառի և նրա հետ գործածված բաղադրիչի միջոցով: Բառային հավելադրումներ կարելի է համարել օտար, մասնավորապես ուսերեմի նմանությամբ հայերենում կիրառվող որոշ արհեստածին բառեր և արտահայտություններ, ինչպես օրինակ՝ բանը կայանում է նրանում, հանդիսանում է, դա և այլն, որոնք ճիշտ ձևեր չեն և ծանրացնում ու վերամբարձ են դարձնում խոսքը:

Բանավոր խոսքում շատ են կիրառվում նաև այնպիսի բառեր և արտահայտություններ, որոնք գործածվում են ժամանակ շահելու, խոսքի ընթացքում առաջացած դադարը լցնելու նպատակով: Այդպիսի բառերից են ուրեմն, այսպես, դե, բան, ուրեմն այսպես և այլն: Սրանք, և վերը բերված օրինակները ժխտելի տարբերակներ են:

Ինչպես տեսանք, խոսակցական լեզուն, հետևաբար նրա բառապաշարը, համեմատաբար անկայուն համակարգ է, այսինքն՝ առավել հեշտությամբ և հաճախակի է մեթարկվում փոփոխությունների:

Г. Н. ВАРДАНЯН - Некоторые особенности разговорной речи современного армянского языка. - В статье рассматриваются принципы и особенности современной разговорной речи и материалом наблюдений становятся различия между разговорной и письменной речью. В частности, анализируются такие слои лексики разговорной речи, как диалектизмы, просторечия, жаргонизмы, архаизмы, окказионализмы, плеонизмы.